

## ՕՁԸ

Իսկ ապրող Յայերն ալ՝ այսպես ապրեցան  
 Լերան կողին, նըման վերքի մը լայնշի  
 Յեղեղատն այն կը տեսնա՞ք.  
 Ջուրեն բացուած, այսօր ջուրի ծարաւուտ  
 Ան ճամբայ մ'է կարմրորակ:  
 Տըղայ կեանքիս, օգոստոսի մ'արեւով,  
 Կ'ելլէի ես անկէ վեր,  
 Դեպի լեռն այն, դեպ իր դաշտերն ընդարձակ՝  
 Ուրկէ ինծի դիւրին էր  
 Քաղել աստղեր ու անոնցմով պըսակուիլ,  
 Շընչել ամէն երկրի հով,  
 Ու հետեւիլ արծիւներուն ընթացքին  
 Մատղաշ հոգիս պարզելով:  
 Ու կ'ելլէի ես այդ կարմիր ճամբայէն...  
 Յոն ո՛չ սիւք կար եւ ոչ խոտ.  
 Թիթեռնիկներն այնտեղ ինկած դիպուածով՝  
 Կը փախչէին հեւհեւկոտ:  
 Արեւն էր լոկ, իմ ուղեկիցս արե՛ւն էր՝  
 Որ մըխած գլուխն հըրաբոց  
 Աւագին մեջ՝ կը խըմէր հողն, ու հազար  
 Պատիճներովն ոսկեգօծ՝  
 Կը ճաթեցներ ապառաժները՝ սնելով  
 Անոնց ծածկած տամկութեամբ:  
 Ու կ'ելլէի ես այդ կարմիր ճամբայէն  
 Շուքս ետ թողած, միակ ամպ:  
 Կեցայ՝ յանկարծ, ու արեւն հետըս կեցաւ  
 Խարըսխըւած գըլխուս վրայ.  
 Վերեն՝ իրամատ ժայռէ մը դուրս սըլացիկ՝